«Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրի Հիմնական դպրոցի զարգացման ծրագիր

**Շրջակա միջավայր, Միջավայրի բարելավում.**

Հիմնական դպրոցը (հասցեն՝ Ծ. Իսակովի 52/6) գործում է 1984թ. կառուցված 12 խմբանոց տիպային 3600 քառ. մ մակերեսով մանկապարտեզի շենքում: Շենքը մեր ուժերով հարմարեցվել է Հիմնական դպրոցի կարիքներին:

Դպրոցում սովորում են թվով 129  1-5-րդ դասարանցիներ: Դպրոցի նախակրթարանում գործում են 2-4 տարեկան սաների  2 մանկապարտեզային խմբեր( 42 սան):

Շենքում կատարվել են բազմաթիվ աշխատանքներ. հիմնովին վերանորոգվել է շենքի ներսի մի մասը՝ մի քանի դասարան- կաբինետ, պարտեզային խմբասենյակներ: Կատարվել են ներքին ձևավորման աշխատանքներ՝ նոր մոտեցում ջեռուցման մարտկոցներին և ներսի աստիճաններին: Մուտքի աստիճանների մոտ թեքահարտակ է կառուցվել: 5 տարեկանների ներքին բակը մաքրվել է քարերից, տնկվել պտղատու ծառեր, ծաղիկներ՝ անխնամ բակը վերածելով պարտեզի: Վրաց գործընկերների հետ բակի մի հատվածում ստեղծվել է հայ-վրացական բարեկամության բակ-պարտեզը, որտեղ տնկել են բազմաթիվ և տարբեր պտղատու ծառեր:

2016-2017 թվականներին անհրաժեշտ է շենքի կես ծավալով կատարել ներքին հարդարման աշխատանքներ, հիմնովին մաքրել և վերանորոգել նկուղները, դրանք հարմարեցնել տեխնոլոգիական լաբորատորիաների՝ խեցեգործության, կերպարվեստի և այլն, նկուղային մասի մի հատվածում ստեղծել կինոսրահ: Քանի որ շենքն իր դիրքով հարմար է,համապատասխան աջակից-հովանավորների դեպքում նախատեսվում է տանիքին տեղադրել արևային էներգիայի սարք: Շենքի արտաքին հատվածը՝ պատերը դրսից կանաչապատել, մագլցող, բարձրացող բույսեր տնկել տանիքում և դրսում: Շենքի հետևի մուտքի աստիճանների մոտ կառուցել թեքահարթակ: Դպրոցի բակում գտնվող անսարք ավտոբուսը վերանորոգել, դարձնել «Ուրախ ավտոբուս», որտեղ սովորողները կընթերցեն,ներկայացումներ կցուցադրեն, ֆիլմեր կդիտեն: Մրգատու ծառերով պետք է հարստացնել դպրոցի պարտեզը: Բակի հողատարածքի մի հատվածում աճեցվելու  են գյուղատնտեսական մթերքներ:

2016-2017 ուստարվա 1-ին դասարանցիների համար անհրաժեշտ է կառուցել ևս մեկ դասարան-կաբինետ: Դրա համար նախատեսվում է կատարել ներքին տեղախոխություններ, տարածքների վերաբախշում:

**Ուսումնական պլան**

1-ին դասարանից սկսած յուրաքանչյուր սովորող իր նախասիրությունների շրջանակում ընտրում է որևէ  ընտրությամբ գործունեություն:

Պլանշետը 5-6 տարեկանների զարգացնող միջավայրում □

Լողը, հեծանիվը, մարմնամարզությունը, շախմատը՝ ներառական տարրական կրթության բաղկացուցիչ:

Պարը, երաժշտությունը, շախմատը, մարմնամարզությունը՝ լրացուցիչ կրթության բաղկացուցիչ:

**Ուսումնական հաստատության սովորողները, նրանց նախաձեռնությունները**

Հիմնական դպրոցի սովորողներն իրենց գործունեության ընթացքում որպես միջոց ազատ օգտվում են համակարգչից, էլ.գրատախտակից, ձայնագրիչից, թվային այլ տեխնիկական միջոցներից, համացանցային ռեսուրսներից, օտար լեզուներից: Սովորողները սպասարկում են Հիմնական դպրոցի ենթակայքը, իրենց անհատական բլոգները, էլեկտրոնային ամսագրերը:

Սովորողները, ըստ նախապես կազմված գրաֆիկի, մասնակցում են հասարակական նախագծերի՝ մաքրում են դպրոցի բակը, շրջակա միջավայրն աղբից, տնկում են նոր բույսեր, ծառեր, ծաղիկներ, խնամում դրանք, հասնում որոշակի արդյունքի:

Մասնակցում են ամենամսյա քաղաքային, քաղաքից դուրս կազմակերպվող ճամփորդությունների, ճամբարների: Դրանց մասին ռադիոնյութեր, տեսանյութեր պատրաստում և հրապարակում իրենց բլոգում, դպրոցի ենթակայքում:

Մասնակցում են կրթահամալիրում կազմակերպվող ստուգատեսներին, փառատոներին, ֆլեշմոբերին, առցանց կազմակերպվող ուսումնական պարապմունքներին, ամենօրյա ընդհանուր պարապմունքներին, Մեդիաուրբաթներին, համերգներին և այլ միջոցառումների ու նախագծերի:

Հանդես են գալիս նոր նախագծերով, նախաձեռնություններով:

**Ուսումնական հաստատության դասավանդողը՝ աշխատանքային պայմաններ, մասնագիտական զարգացում**

Հիմնական դպրոցի դասավանդողները մասնակցում են կրթահամալիրի դասավանդողների ամենշաբաթյա սեմինարներին, որոնք կարող են կազմակերպել և վարել նաև իրենք՝ ըստ իրենց նախաձեռնության և անհրաժեշտության:

Մասնակցում են մանկավարժական աշխատողների ամենամյա ամառային, աշնանային, ձմեռային, գարնանային բաց դպրոցների աշխատանքներին:

Անցկացնում  են կրթահամալիր դիմած մասնագետների վերապատրաստում:

Անընդհատ զբաղվում ինքնակրթությամբ, ինքնազարգացմամբ: Նոր ծրագրեր ու դասավանդման նոր մեթոդներ  սովորում:

Համապատասխան տվյալներ ունենալու դեպքում ընդգրկվում «Սեբաստացիներ» ուսուցչական երգչախմբի, կրթահամալիրի դասավանդողների վոկալ համույթի կազմում:

Կարդում ենք կտակարան

Ընդգրկվում կրթահամալիրի որևէ սպորտային ակումբում, մասնակցում մարզական պարապմունքներին:

Կազմակերպում քաղաքային, մեկօրյա, գիշերակացով ճամփորդություններ, ճամբարներ:

Վարում են և անընդհատ թարմացնում իրենց ուսումնական, դասարանական բլոգը: Իրենց փորձով կիսվում իրենց գործընկերների հետ, նրանց ստացված փորձը կիրառում:

Մասնակցում կրթահամալիրից դուրս կազմակերպվող գիտաժողովներին, սեմինարներին՝ ներկայացնելով իրենց փորձը և իրենց գործընկերներին ներկայացնելով այլոց փորձը:

Ակտիվ մասնակցում են ընդունելության կազմակերպմանը, դրա համար կազմակերպում բացօթյա հանդիպումներ, համերգներ, նախագծեր՝ դրանց կազմակերպման մեջ ընդգրկելով իրենց սովորողներին, ծնողներին:

**Ուսումնական հաստատության սովորողի ծնողները**

Յուրաքանչյուր ծնող, շնորհիվ կրթահամալիրում ազատ ընտրած կրթական ծրագրի, ուսումնառության անհատական պայմանագրի, ոչ միայն գիտակից ու շահագրգիռ անձ է իր երեխայի կրթության առումով, այլև կրթահամալիրի զարգացման ծրագրի իրական մասնակից, պատվիրատուն է:

Ծնողն իր նախասիրությունների շրջանակում ընդգրկվում է կրթահամալիրում որևէ մարզական ակումբում և շաբաթական առնվազն մեկ անգամ մասնակցում  ակումբի պարապմունքներին:

Ծնողն իր ցանկությամբ կարող է մասնակցել նաև «Սեբաստացիներ» ուսուցչական երգչախմբի պարապմունքներին, դառնում երգչախմբի անդամ, մասնակցում համերգների, ճամփորդությունների:

Մասնակցում է դպրոցում կազմակերպող ծնողական սեմինար-հավաքներին:

Իր երեխայի հետ ակտիվ  մասնակցում դպրոցում իրականացվող հասարակական նախագծերին:

Հանդես գալիս նոր նախաձեռնություններով:

**Ուսումնական հասատությունը հեղինակային կրթական ծրագրերի տարածող, կրթական փոխանակումներ,**

Հեղինակային կրթական ծրագրեի տարածման համար կկազմակերպվեն ֆլեշմոբ-համերգներ Երևանի և մարզերի այգիներում,կենտրոնական հատածներում,որոնց մեջ կներգրավեն ինչպես կրթահամալիրց, այնպես էլ պատահական անցորդներ,նոր մարդիկ:

Հիմնական դպրոցի հյուրատան լիարժեք օգտագործում ավելի մատչելի կդարձնի մարզերում բնակվող մասնագետների հետ առնչությունները: Կտրուկ կավելանան կրթական ամենատարբեր փոխանակումների ծավալներն ու աշխարհագրությունը: